...(*) Եւ խանին գործակալ և ճարտարապետ ունճա արարին յորժամ եկն վէզիր ի խան ի տեսանել զնա, և ազատեաց ի Թէրսխանոյն որ էր կարի հիւանդ, որ էր Յուլիս Ի: Եւ ի սոյն օր սպանին զփաշայն մազուլ որ ի Թիրայու եւ զՏէլլի ումն զափուճիպաշի, եւ զարս Ժ կախեալ ի տեղիս տեղիս և զոմանս ի թի տ[վեալ], զոր և միանգամայն գտանէին ի սահմանս սահմանս ի ճանապարհի: Եւ Դ Ե փաշա յղեալ յԱնատօլի ի թէփթիշ աւազակաց եւ ի վերայ Մուրթազայու, քանզի զտուն և զստացուածս նորա առին յարքունիս և զիմամ նորա սպանին: Սպան եւ զմասրաֆ քեաթիպի իւրն՝ վէզիր, վասն դրամի ինչ եւ Ջ դրամն ի Ծ ըստակ տալոյն եւ ցած ըստակ տալոյն:

Եւ ԻԴ Եշի[1]) կալեալ զէմիր փաշա զնազըրն զաըաբխանի և զսահապայարն գտանելով յամէն ([illegible]) Իէ տրամ պակաս: Սահապայարն եդ մնաս ի փաշայն և փաշայն՝ ցնա, վասն որոյ և կալեալ զերկոսին և Կիրակի զամենայն տունն նորա առեալ յարքունիս և Բշի աքսորեալ ի Մսըր. եւ էր նախանձ նորա զի այր հին էր եւ զՄսըր կերած եւ ի ձեռն վալիտէի խորհուրդ յառաջէր, զոր իմացեալ զայս արար. եւ զսեաւ Ներքինիս եւ զաղայս վալիտին ե[հան] արտաքս եւ աքսորէր: Իսկ ի Դշի յեղակարծ ժամու Թ-րդի բերեալ զումն Յունաց Փամպուղ կոչեցեալ, այր երևելի, կախէր ի Պարմաղափուն. պատճառ բազում ասացին, բայց երկուս ստուգեցաւ, մինչ զի յորժամ զմուսէլլիման խափանէր՝ սոքա մուսէլլիմ գոլով երթեալ առ յօճախն և հաստատեալ ([illegible]) և արզուհալ տվեալ սա ղըզլար աղասոյ, քանզի յառաջա-

1) Ջշի.

(*) Թուղթեր ինկած: